

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ



ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2019-2023ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

Գորիս – 2019

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

ԳՊՀ-ի ռեկտոր Ա. Ղուկասյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Վ. Դանիելյան – Ուսումնական մասի վարիչ

Թ. Մարության – Գիտական քարտուղար

Ս. Հայրապետյան – Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի ղեկավար

Ն. Մաֆարյան – Արտաքին կապերի և համագործակցության բաժնի ղեկավար

Ս. Մանուչարյան – ՀՀՄ ֆակուլտետի ղեկանի ժամանակավոր պաշտոնակատար

Լ. Աթաբեկյան – ԲՄ ֆակուլտետի ղեկան

Ս. Առուստամյան – ՃՏ ֆակուլտետի ղեկան

Հ. Պետրոսյան – Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ

Ն. Միրզոյան – Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի պատասխանատու

ԳՊՀ-ի 2019-2023 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը սահմանում է Գործիսի պետական համալսարանի հնգամյա զարգացման գերակա խնդիրներն ու առաջնահերթությունները կառավարման տարրեր օղակներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ-----	4
1. ԳՊՀ-ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----	7
2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ -----	8
3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ -----	9
4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ-----	10
5.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ --	11
6.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ -----	11
7.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ -----	12
8.ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ-----	13
9.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ -----	14
10.ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ -----	15
11.ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ---	15
12.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ-----	19

ՆԱԽԱԲԱՆ

Գորիսի պետական համալսարանը (այսուհետ՝ ԳՊՀ) ՀՀ Սյունիքի մարզում գործող առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն ունի կրթական, գիտական, մշակութային, տնտեսական և ժողովրդագրական կարևոր նշանակություն:

Բուհի ստեղծումը, բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով տարածաշրջանը ապահովելուն զուգընթաց, ի սկզբանե նպատակ է ունեցել տարածաշրջանից երիտասարդության արտահոսքի կանխման, Արցախի հետ կապի ամրապնդման և բնակչության հասարակական-քաղաքական գիտակցության ակտիվացման:

ԳՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը մշակված են կրթական վերջնարդյունքների հիման վրա և իրականացվում են որակավորումների ազգային շրջանակի՝ բակալավրի և մագիստրոսի որակավորումներին համապատասխան:

Ստեղծման առաջին օրից բուհը մեծ դեր է խաղացել մարզի կրթամշակութային կյանքում, նվաճել հաստատուն տեղ հանրապետության բուհերի շարքում: Կրթօջախի շնորհիվ երիտասարդ սյունեցին իր տանն է՝ կապված իր հող ու ջրին, իր ազգային ու մշակութային ակունքներին:

Լինելով մարզում բարձրագույն կրթության լավագույն ավանդների ստեղծողն ու շարունակողը, հետամուտ համաեվրոպական բուհական բարեփոխումներին ու գիտական առաջընթացին՝ կրթօջախը իրականացնում է ռազմավարական իր ծրագիրը, որի արդյունավետության վկայությունը մեր նվաճումներն են, հաստատության հեղինակության շարունակական բարձրացումը, աշխատաշուկայում մեր շրջանավարտների մրցունակությունը: Համալսարանն այն հաստատությունն է, որտեղ տասնամյակների ընթացքում պահպանվել է սերունդների հաջորդականությունը, բազմապատկվել են գիտակրթական նվաճումները:

Տարիների ընթացքում գործելով ՀՀ հեղինակավոր ուսումնական հաստատությունների համակարգում՝ Գորիսի պետական համալսարանն անցել է բարձրագույն կրթության բարեփոխումների հիանալի դպրոց, կուտակել բուհական համակարգի գործունեության հսկայական փորձ:

Կենսունակ ու ներգործուն ավանդույթներ ունեցող կրթօջախի հիմքի վրա, ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի 2400

որոշման համաձայն, դադարեցվել է «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Գորիսի մասնաճյուղի գործունեությունը, և դրա փոխարեն ստեղծվում է «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ որպես ինքնուրույն բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարանի կարգավիճակով:

Գիտակցելով իր պատասխանատվությունը հասարակության ու պատմության առաջ՝ համալսարանը սկսել է լայնածավալ կրթական բարեփոխումների գործընթաց՝ նպատակաուղղելով համալսարանի գործունեությունը ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող որակյալ կրթության ապահովմանը: Հետևել են բազմաշերտ բովանդակային փոփոխությունները և դրանցից բխող մարտահրավերները, որոնց այսօր էլ փորձում է դիմակայել համալսարանը:

Համալսարանի ստեղծումը մարզի զարգացման համար ռազմավարական նշանակությամբ կարևոր ծրագիր էր, որ ենթադրում էր կարճ ժամանակում ձեռք բերել պետական կրթական հաստատության կայուն վիճակ, մրցունակության բարձր մակարդակ, այսինքն՝ առաջատար դիրք տարածաշրջանի այլ բուհերի նկատմամբ, պրոֆեսորադասախոսական կայուն և բավարար կազմ, կրթական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, գիտահետազոտական գործունեության զարգացման բարենպաստ պայմաններ և այլն: Ի պատիվ բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ պետք է նշել, որ համալսարանը, ազգային լավագույն ավանդույթների ու միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ապահովելով կրթության մասշեղիությունն ու հասանելիությունը, ձգտեց գերազանցության ու նորարարական ուսուցման և ունեցավ ռազմավարական ծրագրերին համապատասխան առաջանցիկ զարգացում:

Այսպես, Գորիսի պետական համալսարանը հինգ տասնամյակ շարունակ բեղմնավոր գործունեություն է ծավալել և մեծ աշխատանք է կատարել հանրակրթական դպրոցները և ժողտնտեսությունը որակյալ կադրերով ապահովելու ուղղությամբ:

Այսօր Գորիսի պետական համալսարանը համազգային ու տարածաշրջանային դերակատարությամբ կրթական ու գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որ ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական,

մշակութային բազմազան ու բազմաբնույթ գործունեերով պայմանավորված՝ վերագնահատում ու վերանայում է իր դերն ու պատասխանատվությունը, փորձում է մեծացնել իր մրցակցային առավելություններն ու ներուժը:

Վերջին տարիներին զգալի աշխատանքներ են կատարվել համալսարանի կառավարման համակարգի կատարելագործման, կառուցվածքային ստորաբաժանումների՝ արդիականության պահանջներից բխող փոփոխությունների, մասնագիտությունների վերալիցենզավորման, նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ներդրման, ուսումնական գործընթացի բարելավման, ներքին իրավական դաշտի կարգավորման, ֆինանսական կայունացման, բուհի միջազգայնացման և այլ ուղղություններով: Գրանցվել է համաչափ առաջընթաց բուհը ներկայացնող բոլոր բաղադրիչներում (ուսումնամեթոդական, գիտահետազոտական, ֆինանսատնտեսական, իրավական և այլն):

2016 թվականին Գորիսի պետական համալսարանն ունեցավ նոր տարբերանշան (լոգո), օրհներգ, ժամանակակից մեդիաչափանիշներին համապատասխանող նոր վեբ-կայք՝ www.gorsu.am, ինչպես և վերահիմնադրվեց պաշտոնաթերթը («Լրատու Գորիսի պետական համալսարանի»):

Նոր ձեռքբերումներ արձանագրվեցին միջազգային համագործակցության ոլորտում և միջբուհական համագործակցության շրջանակներում:

Այսօր համաշխարհային քաղաքակրթության արժեքների վերագնահատման ու կրթական համակարգի բարեփոխումների ու նորացման ժամանակակից փուլում բուհը մեծ առաքելություն ու պատասխանատվություն է ստանձնել՝ իր գործունեությունը նպատակաուղղելով կրթության բովանդակության արդիականացմանն ու հիմնախնդիրների իրատեսական լուծմանը:

Համալսարանի ուշադրության կենտրոնում մշտապես եղել է կրթական բարեփոխումների արդյունավետ զարգացումը՝ իբրև ուղեցույց ունենալով ՀՀ բարձրագույն մասնագիտական ոլորտում Բոլոնիայի սկզբունքների իրագործումը երկու ուղղություններով՝ բարեփոխումների տեսական դրույթների մշակում և գործնական ներդրում, որը կրել է շարունակական բնույթ:

2018 թվականին համալսարանը ստացավ ինստիտուցիոնալ պայմանական հավատարմագրման հավաստագիր՝ երկու տարի ժամկետով:

Արդիականության պահանջներից բխող որակի ապահովումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է բուհի հիմնական գործառույթը:

ԳՊՀ ռազմավարական ծրագիրը կոչված է ուղղորդելու բուհի հետագա զարգացման գործընթացը՝ այն համապատասխանեցնելով նոր իրողություններին ու հեռանկարներին:

Համալսարանի կառավարումը և կառուցվածքը

Համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Համալսարանը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ձեռք է բերում և իրականացնում կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրներին համապատասխան իրավունքներ ու պարտականություններ: Համալսարանն իր գործունեության նպատակներին համապատասխան կարող է իրականացնել ուսումնական, հետազոտական, փորձագիտական, վճարովի ծառայություններ և ուսուցում՝ օրենքով ու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Համալսարանն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվ: Համալսարանն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք:

Համալսարանի խորհուրդը

ԳՊՀ խորհուրդը բուհի կոլեգիալ կառավարման մարմինն է, որը, կառավարության որոշմամբ, ձևավորում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը քննարկում և հաստատում է ԳՊՀ բյուջեն, ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրերը, լսում և գնահատում է ԳՊՀ տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը, ընտրում է ԳՊՀ

ռեկտորին: ԳՊՀ խորհուրդը ձևավորում է բուհի պրոֆեսորադասախոսական կազմի (25%), սովորողների (ուսանողներ՝ 25 %), ինչպես և հիմնադրի (ՀՀ կառավարություն) ու լիազորված մարմնի (ՀՀ կրթության և գիտության նախարարություն) ներկայացուցիչներից (համապատասխանաբար 25%): ԳՊՀ խորհուրդը կազմված է 24 անդամից: ԳՊՀ ռեկտորը չի կարող լինել ԳՊՀ խորհրդի անդամ: Նա խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

Համալսարանի գիտական խորհուրդը

Գործիսի պետական համալսարանի գիտական խորհուրդը կառավարման մարմին է, որը լուծում է բուհի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման ու կառավարման հիմնահարցերը: Գիտական խորհուրդը հաստատում է իր կանոնակարգը, ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների՝ սահմանում է վճարաչափերը, քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում է գիտական հաղորդումներ բուհում կատարվող կարևորագույն գիտահետազոտական ու գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին: Գիտական խորհրդի անդամների թիվը 28 է (2016 թվականի ապրիլի 28-ի նիստի որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել գիտական խորհրդի թվակազմում և հաստատվել նոր կազմը՝ բաղկացած 28 անդամներից: Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է ԳՊՀ ուսանողական խորհուրդը: Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Գիտական խորհրդի 2016 թվականի ապրիլի 28-ի նիստի որոշմամբ՝ վերակազմավորվել են ԳՊՀ գիտական խորհրդին առընթեր նախկին 5 մշտական հանձնաժողովներն՝ դրանց հենքի վրա ձևավորվել են 3 նոր մշտական հանձնաժողովներ՝ 1.Գանոնադրական և կառուցվածքային

փոփոխությունների համակարգման, 2. Մրցութային, ուսումնասեթողական և գիտական հարցերի, 3. Միջազգային համագործակցության, կրթական ծրագրերի և կրթության որակի: Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկություններ ներկայացնելը: Գիտական խորհրդի որոշումները կիրառվում են ռեկտորի հրամաններով, իսկ նիստերն արձանագրվում են և ստորագրվում գիտական խորհրդի նախագահի և գիտական քարտուղարի կողմից:

Համալսարանի ռեկտորատը

Ռեկտորատը համալսարանի ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածներում, իր կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում, քննարկում է համալսարանի գործունեությանը վերաբերող հարցեր: Ռեկտորատի կազմի մեջ մտնում են համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, համալսարանի գիտական քարտուղարը, ֆակուլտետների ղեկանները, գիտական և ուսումնական վարչությունների (կամ մասերի) ղեկավարները:

Համալսարանի ռեկտորը

Համալսարանի ընթացիկ ղեկավարումն իր իրավասության սահմաններում իրականացնում է գործադիր մարմինը՝ համալսարանի ռեկտորը, որն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԳՊՀ կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ համալսարանի խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Համալսարանի ռեկտոր կարող է ընտրվել գիտամանկավարժական աշխատանքի փորձ, գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձը: Համալսարանի ռեկտորը ղեկավարում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը, ներկայացնում է համալսարանը Հայաստանի Հանրապետության պետական

մարմիններում, կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում, ապահովում է, ըստ մասնագիտությունների, մասնագետների պատրաստման և գիտահետազոտական աշխատանքների պետական պատվերների կատարումը, սահմանում է համալսարանի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները, կնքում է աշխատանքային պայմանագրեր սահմանված կարգով ընտրված դեկանների, ամբիոնի վարիչների և դասախոսների հետ: Պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, սահմանում է նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության շրջանակները, սահմանված կարգով կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում աշխատողների և սովորողների նկատմամբ, հրամաններ է արձակում ուսանողների և մագիստրոսների ընդունելության, կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու և որակավորման աստիճան շնորհելու մասին, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համալսարանի պրոռեկտորներին՝ սահմանելով նրանց գործունեության ոլորտներն ու պարտականությունները, իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԳՊՀ կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

1. ԳՊՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գործիսի պետական համալսարանը բազմապրոֆիլ բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն՝ բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճաններով: Համալսարանը թողարկում է մանկավարժական, ճարտարագիտական, տնտեսագիտական ուղղվածության մասնագետներ: Ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով:

Համալսարանը ՀՀ Սյունիքի մարզի առաջատար ուսումնագիտական կենտրոնն է, որի թողարկած մասնագետներն ակտիվորեն մասնակցում են ՀՀ-ի, մասնավորապես տարածաշրջանային տնտեսության համապատասխան ճյուղերի, կրթական ոլորտի հիմնախնդիրների լուծմանը:

Գործիսի պետական համալսարանն իր հիմնական *առաքելությունն* է համարում.

- ա)* տարածաշրջանի կրթության, մշակույթի, արդյունաբերության, իրավական դաշտի ու սպասարկման ոլորտի կարիքներին ու զարգացման հնարավորություններին համահունչ կրթական-հետազոտական ծրագրերի ու ծառայությունների իրականացումը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, մրցունակ մասնագետների պատրաստումը, համագործակցային ծրագրերի՝ պատշաճ մակարդակով իրականացումը,
- բ)* արտաքին ու ներքին շահակիցների հետ համագործակցության և հաշվետվողականության մշակույթի ձևավորումը, ինչը կնպաստի համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների թափանցիկությանը և կրթության որակի բարձրացմանը,
- գ)* կրթության բնագավառում առաջավոր փորձի փոխանակման, միջազգային համագործակցության, կրթության բովանդակությանը և որակին ներկայացվող պահանջների ու չափանիշների ապահովումը,
- դ)* բարեփոխումների ու նորամուծությունների ներդրման ճանապարհով բարձրագույն կրթության առաջանցիկ զարգացումը:

ԳՊՀ –ի ռազմավարական նպատակներն են.

- ստեղծել պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրեր,
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ուսումնառության ու դասավանդման նորագույն մեթոդների կիրառման համար,
- ընդլայնել գործատուի, աշխատաշուկայի և մասնագիտական ուսումնական հաստատության միջև եղած կապերը,
- ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման աշխատանքներում ընդգրկել արտաքին շահակիցներին՝ հաշվի առնելով նրանց կարիքները մասնագետների պատրաստման գործընթացում,
- ձևավորել բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կայուն մեխանիզմներ,
- վերհանել սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական ընդհանուր գործոններ՝ պարզելու մասնագիտական կրթական ծրագրի իրականացման ընթացքը:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի ռազմավարական ծրագրի կառավարման և վարչարարության ոլորտում իր առաքելությանը համապատասխան արդյունավետ գործունեություն ծավալող, անհրաժեշտ մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներով ապահովված կառավարման համակարգի ստեղծման ու զարգացման *նպատակներն են.*

- հստակեցնել և համակարգել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործառնությունների բաշխվածությունը՝ ապահովելով վե
- ռջիններիս արդյունավետ փոխգործակցությունը,
- պարբերաբար ուսումնասիրել ու վերլուծել համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները՝ ներառյալ վիճակագրական և այլ տվյալներ, կիրառել ուսումնասիրության չափելի գործիքներ,
- բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին ու ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները,

Խնդիրներն են՝

- մշակել կառավարման համակարգի և վարչական կառույցների կանոնակարգերի և աշխատակարգերի մշտադիտարկման, վերանայման ու բարելավման մեխանիզմներ ու ընթացակարգեր,
- կատարելագործել տեղեկատվության հավաքագրման, վերլուծության ու կիրառման համակարգը, մեխանիզմներն ու ընթացակարգերը,
- ապահովել համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ կադրերով, ինչպես և փորձառու մասնագետների ու սկսնակ դասախոսների արդյունավետ համագործակցություն,
- հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայության,
- ստեղծել ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ:

3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՄԿԾ)

Գործիսի պետական համալսարանի զարգացման ռազմավարական պլանի հիմնական ուղղություններից է այնպիսի ՄԿԾ-ների մշակումը և վերամշակումը, որոնց հիման վրա իրականացվող կրթական գործունեության արդյունքում պատրաստի Հայաստանի Հանրապետության, մասնավորապես տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ, արհեստավարժ, բարձրակարգ մասնագետներ:

Ռազմավարական այդ խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

- կիրառել ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, դրանց նպաստող արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ ներքին և արտաքին շահակիցների անմիջական մասնակցությամբ,
- ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին համահունչ՝ հստակ ձևակերպել ԳՊՀ ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ ապահովելով դրանց չափելիությունը, դրանց հիման վրա ընտրելով գնահատման մեթոդներ,
- ապահովել ԳՊՀ-ի արտաքին շահակիցների առավել լայն ներգրավվածությունն ՄԿԾ-ների մշակման գործընթացներում,

- շարունակական թարմացնել ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերը՝ հստակ սահմանելով գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերման մեխանիզմները, համապատասխանեցնել կրթական ելքային արդյունքները գործատուների պահանջներին,
- արդյունավետորեն համադրել դասավանդման ավանդական և արդի մեթոդներ, կիրառել նորարարական կրթական տեխնոլոգիաներ,
- ապահովել մագիստրոսների հետազոտական աշխատանքների գիտական և կիրառական ուղղվածությունը, ինչպես նաև մագիստրոսական կրթական աստիճանում առաջատար մասնագետների ներգրավվածության աճը,
- բարձրացնել ուսանողների՝ ուսումնական, արտադրական, գիտամանկավարժական ու գիտահետազոտական պրակտիկաների արդյունավետության մակարդակը, ընդլայնել պրակտիկայի իրականացման վայրերի ընտրությունը, զարգացնել պրակտիկայի ընթացքում ուսանողների գործնական կարողությունները,
- իրականացնել ակադեմիական ազնվության ապահովման գործող մեխանիզմների արդյունավետության գնահատում,
- հաշվի առնելով կրթության որակի արդի պահանջները՝ մշտապես վերանայել ու թարմացնել ՄԿԾ-ները՝ համապատասխանեցնելով բուհի ռազմավարական ծրագրի պահանջներին ու խնդիրներին, դարձնելով առավել համահունչ բուհի առաքելությանը,
- ապահովել ՄԿԾ-ների իրականացման համար ուսանողակենտրոն համակարգում աշխատելու պատրաստ պրոֆեսորադասախոսական կազմ:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԳՊՀ-ի նպատակներից են աշխատաշուկան ապահովել մրցունակ, արհեստավարժ, բարձրակարգ մասնագետներով, բարելավել ու զարգացնել գոյություն ունեցող կրթական միջավայրը՝ ուղենիշ ունենալով ուսուցման ուսանողակենտրոն համակարգի կատարելագործումը:

Ռազմավարական այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է.

- համակարգել և կատարելագործել ուսանողների և դիմորդների հավաքագրման մեխանիզմները,
- կազմակերպել համակարգչային և օտար լեզուների ուսուցման լրացուցիչ դասընթացներ,
- բարելավել ուսանողների՝ կառավարման մարմիններում ներգրավման մեխանիզմները՝ ընդգրկելով նաև հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին,
- կատարելագործել առկա և հեռակա ուսուցման կրթաձևերում սովորող ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմները,
- կայացնել ուսումնական խորհրդատուների ինստիտուտը, բարձրացնել ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետությունը,
- անցկացնել ուսումնասիրություններ՝ պարզելու գործատուների հետ կապի արդյունավետությունը, աշխատաշուկայի և շրջանավարտների բավարարվածությունը,
- խրախուսել ուսանողների մասնակցությունը հանրապետական ու միջազգային գիտաժողովներին,
- մշակել վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույցեր՝ ապահովելով վերջինիս հասանելիությունն ուսանողներին,
- համալսարանի պայմանները հարմարեցնել նաև ԿԱՊԿՈՒ ուսանողների կարիքներին:

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍՄԱԿԱՆ (ՊԴ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԾՄԱՆԴԱԿ (ՈԻՕ) ԿԱԶՄԸ

ԳՊՀ-ն իր զարգացման ռազմավարական ծրագրում հաստատության նպատակների և տեսլականի իրականացման համար կարևորում է անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի առկայությունը:

Ըստ այդմ էլ՝ ՊԴ և ՈւՕ կազմի զարգացմանն ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության կարևորագույն *նպատակներն* ու *խնդիրներն* են՝

- կադրերի պլանավորումը և ընտրությունը (այն ներառում է աշխատակիցների փնտրման և ընտրության գործընթացների մշակում),
- կադրերի պահպանումը (այն գործիքակազմը, որ անհրաժեշտ է ստանալու իրականացվող աշխատանքների պահանջվող մակարդակը, պահպանելու աշխատակիցների մոտիվացիան և բավարարվածությունը աշխատանքից, աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգերի (ընթացակարգերի) մշակումը և հաստատումը),
- կադրերի հոսունության պլանավորումը (պրոֆեսորադասախոսական անձնակազմի սկսնակ անդամների ուղղված միջոցառումներ)
- կատարողականների վերանայումն ու գնահատումը՝ ներդնելով և կիրառելով համապատասխան ստանդարտներ,
- կադրերի վարկանիշավորումը (առաջխաղացում),
- վերապատրաստումը և մասնագիտական զարգացումը (օգտագործելու աշխատակիցների ներուժն ու երաշխավորելու հմտությունների զարգացումը):

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԳՊՀ-ում հետազոտական գործունեության շարունակական իրականացումը և կապն ուսումնառության հետ պահելու համար անհրաժեշտ է հստակեցնել այդ ոլորտում առկա խնդիրները և մշակել համապատասխան գործողություններ:

Խնդիրներն են.

ա) հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով հետազոտությունների իրականացում և զարգացում,

բ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում,

գ) հետազոտական աշխատանքների միջազգայնացման խթանում,

դ) հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետ փոխկապակցվածության ապահովում:

Ռազմավարական այդ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ է.

- մշակել և սահմանել առաջիկա 5 տարիների համար (երկարաժամկետ) ԳՊՀ-ի հետազոտական գործունեության ոլորտի գերակայություններն ու առաջնահերթությունները՝ շեշտադրելով տարածաշրջանի կարիքները և կարևորելով հետազոտության արդյունքների հնարավոր կիրառությունը,
- մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ, առաջընթացը չափագրող մեխանիզմներ և ցուցանիշներ,
- գիտահետազոտական ոլորտի համար իրականացնել ֆինանսական պլանավորում և հատկացնել բավարար միջոցներ՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ գիտական աշխատանք կատարելու համար,
- մշակել միջառարկայական հետազոտությունների խրախուսման մեխանիզմներ,
- խթանել հետազոտությունների առևտրայնացման մեխանիզմների և իրականացման քայլերի մշակումը՝ ուղղված հետազոտությունը՝ որպես բուհի եկամտի աղբյուր դարձնելուն,
- մշակել ուսանողների և դասախոսների՝ հետազոտական գործընթացներում ներգրավման հստակ մեխանիզմներ՝ ակտիվացնելով ուսանողների և դասախոսների համագործակցությունն ինչպես բուհի ներսում, այնպես էլ այլ ուսումնական հաստատություններում,
- հետազոտության ոլորտում, այդ թվում նաև միջազգային մակարդակում, հաստատել կայուն համագործակցություններ,
- խրախուսել գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում հրատարակումների քանակի ավելացումը,
- մագիստրոսական և բակալավրական ավարտական աշխատանքները դարձնել առավել արդիական ու գիտագործնական՝ թեմաները բխեցնելով տարածաշրջանի կարիքներից,
- բուհում ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ՝ ապահովելով հետազոտական գործունեության արդյունքների կիրառումն ուսումնական գործընթացում:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԳՊՀ-ի առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման կարևորագույն խնդիրներից է համապատասխան ենթակառուցվածքների և ռեսուրսների ապահովումը, մշակիտարկումն ու բարելավումը: Վերջինս ենթադրում է.

ա) ուսումնական և աշխատանքային միջավայրի շարունակական բարելավում, այդ թվում՝

- ուսումնական մասնաշենքերի և ենթակառուցվածքների աստիճանական բարելավում՝ վերանորոգումների միջոցով,
- գրադարանի պահոցների նորոգում և բարելավում,
- մարզադահլիճի և հանդերձարանների վերանորոգում,
- գրադարանի համալրում մասնագիտական գրականությամբ,
- լաբորատորիաների վերազինում նորագույն սարքավորումներով և նյութերով, հատկապես՝ քիմիայի և կենսաբանության ուղղությամբ.

բ) ռազմավարական նպատակների իրականացման համար ֆինանսական ռեսուրսների նպատակային ապահովում և բարելավում.

- ֆինանսական մուտքերի բազմազանեցման աստիճանական ապահովում,
- ֆինանսական ռեսուրսների բախշման բարելավում՝ ըստ բուհի գերակա ռազմավարական ուղղությունների,
- ռազմավարական յուրաքանչյուր նպատակի իրականացման համար նախատեսվող ռեսուրսների, միջոցների բացահայտման մեխանիզմների կատարելագործում, ֆինանսական պլանավորման բարելավում,
- ռազմավարական հայեցակարգի նպատակների իրականացման տեսանկյունից ֆինանսական հատկացումների և ծախսերի արդյունավետության, նպատակայնության գնահատում,
- բուհի աշխատակիցների աշխատավարձերի աստիճանական բարձրացում.

գ) աշխատողների և ուսանողների առողջության և աշխատանքային ապահով ու անվտանգ միջավայրի ստեղծում և բարելավում.

- ուսանողների և աշխատակիցների հանգստի կազմակերպման համար միջոցների տրամադրում,
- ուսումնական և աշխատանքային միջավայրի հարմարեցում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց պահանջներին,
- բուհի հակահրդեհային համակարգերի կատարելագործում:

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ-ի Հասարակայնության հետ կապերի և լրատվության ոլորտը ԳՊՀ-ի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն է, որի գործունեությունը միտված է Գորիսի պետական համալսարանի հեղինակության ձևավորմանն ու պահպանմանը, համալսարանի վերաբերյալ հավաստի տեղեկատվության մատչելի ապահովմանը, հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատմանը, հանրության հետ կապերի ակտիվացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, ներքին ու արտաքին շահակիցների համար բուհի գործունեության թափանցիկությանը, ներքին ու արտաքին հասարակական վերաբերմունքի ձևավորման («փիառ»-ի) արդյունավետ իրագործմանը, հաշվետվողականության ապահովմանը:

Բաժնի ռազմավարական *խնդիրներն* են.

- շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականության և մեխանիզմների մշակում և ներդրում,
- բուհի գործունեության թափանցիկության և ԳՊՀ-ի մասին տեղեկատվության հասանելի տրամադրման համար բուհի պաշտոնական կայքէջի բարելավում,
- հասարակական կարծիքի ուսումնասիրության նպատակով համալսարանի պաշտոնական կայքէջում մեկնաբանություններ թողնելու հարթակների ստեղծում,
- հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների կայունության և արդյունավետության ապահովում ու համակողմանի ուսումնասիրություն,

- ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների հետ համագործակցության ակտիվացում,
- առկա խնդիրների վերհանման և բարեփոխման նպատակով տարածաշրջանային շահակիցների հետ հանդիպումների, «կլոր սեղանների», դասընթացների կազմակերպմանն աջակցում:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ԳՊՀ-ում անհրաժեշտ քաղաքականությունն ու ընթացակարգեր մշակելու անհրաժեշտ է իրագործել հետևյալ *խնդիրները*.

- արտաքին կապերին, փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծում,
- բարելավել արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերը և մեխանիզմները:

Բուհի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի կանոնակարգված գործունեության համար անհրաժեշտ է.

- մշակել համընդհանուր և համապարփակ տեսլական ԳՊՀ-ի՝ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում այլ բուհերի հետ համագործակցության վերաբերյալ,
- ընդլայնել ԳՊՀ-ի կայքէջում առկա օտարալեզու տեղեկատվությունը:

Բուհը կարիք ունի արդյունավետորեն համագործակցելու տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, որի համար անհրաժեշտ է.

- ընդլայնել համագործակցության շրջանակները հայաստանյան և միջազգային բուհերի հետ՝ համատեղ գիտահետազոտական, ուսումնառողների ու դասավանդողների փոխանակման, կարողությունների զարգացման և այլ դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու նպատակով,

- ուսումնասիրել համանման կրթական ծրագրեր իրականացնող, նման առաջնահերթություններ ու տարածաշրջանային առանձնահատկություններ ունեցող բուհերի գործունեությունը, իրականացնել արդյունքների վերլուծություն ու համադրում և առաջավոր փորձի կիրառում:

Բուհը պետք է հնարավորինս ապահովի ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար.

- մշակել ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող համակարգված մեխանիզմներ,
- կազմել օտար լեզվի շարունակական ու երկարաժամկետ դասընթացների ժամանակացույց,
- մշակել մեխանիզմներ՝ խթանելու բուհի ներքին շահակիցների մասնակցությունն օտար լեզուների դասընթացներին և օտար լեզուների իմացության բարելավմանն ուղղված միջոցառումներին,
- ապահովել ԳՊՀ-ի դասախոսների և ուսանողների՝ ժամանակակից օտարալեզու արդիական շտեմարաններին, միջազգային ամսագրերի տվյալների բազաներին և իրենց հետազոտական ոլորտին առնչվող գրականության հասանելիությունը:

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ԳՊՀ-ի որակի ապահովման խնդրի արդիականությունը պայմանավորված է գործընթացներով, որոնք այսօր տեղի են ունենում ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, այն է՝ Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների զարգացում, դրանց իրականացման խթանում և ուղղորդում դեպի որակի ապահովման եվրոպական չափանիշներ.

ա) որակի ապահովման նկատմամբ համալսարանի պատասխանատվության բարձրացում՝ որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործման միջոցով,

բ) գիտելիքահեն տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի վերանայում և արդիականացում:

Վերոնշյալ գործընթացները հիմք են հանդիսանում որակի ապահովման ոլորտում բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների և

համապատասխան ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնց հիմնական նպատակը որակի ապահովման ներքին համակարգի ձևավորումն է:

Որակի ապահովման բնագավառում համալսարանի ռազմավարական *նպատակներն են՝*

- աջակցել բուհի հանրային վստահության, պատասխանատվության, մրցունակության ապահովմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը,
- աջակցել մատուցվող կրթական ծառայությունների կատարելագործմանը շահակիցների կարիքների վերհանման միջոցով,
- պարբերաբար իրականացվող մշտադիտարկման միջոցով բացահայտել ուսանողների, դասախոսների կարիքները, աջակցել դրանց լուծման մեխանիզմների մշակմանը և ներդրմանը,
- աջակցել ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանը,
- նպաստել ուսանողների և դասախոսների շարժունության մեխանիզմների կատարելագործմանը:

Որակի ապահովման բնագավառում ԳՊՀ-ի ռազմավարական *խնդիրներն են՝*

ա) բացահայտել համալսարանի շահակիցների կարիքները և աջակցել դրանց բավարարմանը,

բ) աջակցել մասնագիտական կրթությունը որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացին,

գ) նպաստել մասնագիտական կրթության մատչելիությանը և իրականացման թափանցիկությանը,

դ) արժևորել շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման մշակման գործում,

ե) աջակցել համալսարանի կրթական ծրագրերի հավատարմագրմանը,

զ) նպաստել համալսարանի կառավարման համակարգերի բարեփոխումներին:

11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ

Հակակոռուպցիոն մեխանիզմների, ծրագրերի ու գործողությունների ներդրմամբ ԳՊՀ-ի ռազմավարական ծրագրում կարևորում է համալսարանի հակակոռուպցիոն կառուցակարգերի ամրապնդումն ու զարգացումը, բարեվարքության կանոնների արմատավորումը, ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորումը, ուսանողների բարոյական, իրավական պատշաճ դաստիարակությունը*:

Նշված նպատակին հասնելու համար ԳՊՀ-ն պետք է ամրագրի հակակոռուպցիոն քաղաքականության համապատասխան սկզբունքներ և ուղղություններ, որպեսզի կանխի կոռուպցիոն երևույթներն ու վտանգները:

Բուհի որդեգրած *սկզբունքներն են.*

- ա)* օրինականություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում,
- բ)* իրավահավասարություն, ըստ որի՝ համալսարանի բոլոր ուսանողները, դասախոսները, տարբեր տարակարգերի աշխատակիցները, ներքին և արտաքին շահառուները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով,
- գ)* մարդու իրավունքների և ազատությունների առաջնահերթություն, հարգանք բոլորի պատվի և արժանապատվության, անձնական և գույքային իրավունքների նկատմամբ, մարդու իրավունքների և օրինական շահերի խախտումների կանխում,
- դ)* սոցիալական պատասխանատվություն, համաձայն որի՝ համալսարանի ղեկավար կազմը, բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները բարոյական և իրավական պատասխանատվություն են կրում ԳՊՀ-ի հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար:

* ԳՊՀ էթիկայի կանոնակարգ, ԳՊՀ աշխատառային ներքին կանոններ:

ԳՊՀ-ի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական *ուղղություններն են.*

- ա) կոռուպցիոն վտանգների բացահայտում և կանխում՝ ուսումնական գործընթացի բոլոր փուլերում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կանխատեսում, օբյեկտիվ գնահատում և դրանց նվազեցմանն ու հաղթահարմանը ուղղված միջոցների ձեռնարկում,*
- բ) ակադեմիական ազնվության նորմերի և բարեվարքության կանոնների արմատավորում,*
- գ) կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում, կոռուպցիայից գերծ կրթական միջավայրի ապահովում,*
- դ) համալսարանի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, որոշումների ու հրամանների հստակ կատարում, հաշվետվողականության և վերահսկողության կառուցակարգերի կատարելագործում,*
- ե) ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն, հակակոռուպցիոն միջոցառումների իրագործում և դրանց արդյունավետության ապահովում:*

12. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

1. Ռազմավարական ծրագրի նշանակությունը և կիրառման ոլորտներ

- 1.1. Սույն ռազմավարական ծրագիրը որոշում է ԳՊՀ-ի ենթակառուցվածքների նպատակները, խնդիրները և համագործակցության պայմանները համալսարանի առաքելության և նպատակների իրականացման գործում:
- 1.2. Ռազմավարական ծրագիրը կարգորոշում է համալսարանի գործունեությունը առաքելության իրականացման ուղղությամբ՝ մշտադիտարկման միջոցով:

2. Գործընթացի նկարագրությունը

- 2.1 Մշտադիտարկման գործընթացը նպատակ ունի ոչ միայն վերացնելու գոյություն ունեցող անհամապատասխանությունները, այլ նաև կանխատեսելու դրանք:
- 2.2 Մշտադիտարկման առարկա է ԳՊՀ-ի բոլոր ենթակառուցվածքների գործունեությունն առաքելության և նպատակների իրականացման գործում:
- 2.3 Մշտադիտարկումն իրականացվում է՝ պահպանելով հետևյալ սկզբունքները՝ *ամբողջականություն, անընդհատություն, օպերատիվություն, մշտադիտարկման համապատասխանություն համալսարանի միջոցներին, անհակասականություն:*
- 2.4 Մշտադիտարկումն անց է կացվում այնպիսի գործիքների կիրառմամբ, որոնք դիտարկելի են և չափելի:
- 2.5 Մշտադիտարկման հիմնական *մեթոդներն* են.
- կրթության բնագավառի նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրություն,
 - նպատակաուղղված դիտարկում և մասնակցություն նախատեսված միջոցառումներում,
 - սոցիոլոգիական գրավոր և բանավոր հարցումներ,
 - գրույցներ և քննարկումներ կառուցվածքային օղակների ղեկավարների, դասավանդողների, ուսումնառողների և նրանց ծնողների հետ,
 - գրավոր հարցումներ,
 - ընթացիկ ստաստիկա,
 - պարբերական հաշվետվություն:
- 2.6 Գործընթացում ընդգրկվում են համալսարանի բոլոր ենթակառուցվածքները:

3. Մշտադիտարկման նպատակները և խնդիրները

3.1 Մշտադիտարկման *նպատակը* ԳՊՀ-ի առաքելության և գործունեության համապատասխանության ապահովումն է: Այդ նպատակին հասնելու համար մշտադիտարկումը պետք է լուծի հետևյալ *խնդիրները*.

- սահմանել մշտադիտարկման կարգը և մեթոդները,
- որոշել ռեսուրսային ապահովումը,
- մշակել գործընթացում կիրառվող փաստաթղթերը,
- որոշել գործընթացում ընդգրկված աշխատողների պատասխանատվության չափը:

4. Գործընթացի իրականացման փուլերը

Սույն գործընթացըն իրականացվում է հետևյալ փուլերով.

- ա)* մշտադիտարկման պլանավորում,
- բ)* մշտադիտարկման միջոցառումների անցկացում (տվյալների հավաքում, հարցումների անցկացում, տվյալների մշակում),
- գ)* մշտադիտարկման արդյունքում ստացված տվյալների վերլուծություն, անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ որոշումների ընդունում,
- դ)* ճշտող և նախազգուշացնող միջոցառումների անցկացում: